

Մեզ գրված մի նամակից տեղեկանում ենք, որ հոկտ. 13/26-ին, շաբաթ, Եգիպտոսի մայրաքաղաքում, Կահիրէում, տեղի է ունեցել շքեղ ու հանդիսաւոր երեկոյթ ի պատիւ հայ տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ կրկնակ յօբելեաններին:

Հանդէսը բացվել է Մ. Պէշիկթաշեանի յայտնի «Եղբայր եմք մեք» երգով, որ նուագել է օրկեստրը: Ապա՝ Հայկ. Բարեգործական Ընդհ. Միութեան կենտր. վարչութեան քարտուղար Վ. Մայէզեան արտասանել է իր բացման խօսքը, որից յետոյ հանդիսականներին ցոյց են տրվել սինեմատօգրաֆիական հետեւալ նկարները. հայ ընեռագրեր, ս. Սահակ և ս. Մեսրոպ, հայ թագաւորներ, թագուհիներ, իշխաններ, եկեղեցիներ, քանդակներ, հայկական դրամներ, հայ ձեռագրեր, նկարչութիւն, արքայական հրովարտակներ, հայ կաթողիկոսներ:

Երեկոյթի երկրորդ մասն սկսվել է Գամա-Քաթիպայի «Արաքսի արտասուքը» երգով, որ նուագել է օրկեստրը: Ապա Սուրէն Պարթեան բանախօսել է՝ թեմա վերցնելով «Հայու ոգին»: Այդ բանախօսութիւնից յետոյ հանդիսականներին ցոյց են տրվել հետեւալ նկարները, դարձեալ սինեմատօգրաֆիայով. առաջին տպագրիչ Մեղաւոր Յակոբ, Աբգար, Սուլթան Շահ, հայ տպագրիչներ և իրանց տպած գրքերը, հայկաթօլիկ կաթողիկոս պատրիարքներ, Մխիթար արքայապետ և իր յաջորդները:

Իրանից յետոյ սկսվել է երեկոյթի երկրորդ մասը Բաֆֆիի «Ձայն տուր, սվ ծովակ» երգով, որը երգել է տ. Օ. Վօլտէրը:

Ապա Տրդատ Նշանեան արտասանել է Պետ. Գուրեանի յայտնի «Տրտունջը» մենախօսութիւնը, որից յետոյ ամբիօս է բարձրացել հայ-բողոքական պատուելի Հ. Խանդավուր և օրվայ պատշաճ մի բանախօսութիւն արել: Խանդավուրի ճառից յետոյ դարձեալ սինեմատօգրաֆի միջոցով ցոյց են տրվել հանդիսականներին հետեւալ նկարները. հայ ամիրաներ, բարերարներ, պատուելիներ, ուսուցիչներ, գրագէտներ, խմբագիրներ և իրանց թերթերը, գիտուններ, բժիշկներ, հայ պատրիարքներ և հայ-բողոքական ազգապետներ:

Այսուհետև սկսվել է երեկոյթի չորրորդ և վերջին մասը Գ. Սեթեանի մի բանախօսութեամբ, որին հետեւել է Ս. Փափազեանի յայտնի երգը՝ «Արիք Հայկազունք», որ նուագել է օրկեստրը: Իրանից յետոյ սինեմատօգրաֆիական բաժնում ցոյց են տրվել հաճախակութեան հետեւալ նկարները. թէրքահայոց ազգ. սահմանադրութեան հիմնադիրներ, նկարիչներ և իրանց գործերը, դերասաններ և դերասանուհիներ, ճարտարապետներ, պետական պաշտօնատարներ, բարեգործ տիկիներ, գորավարներ, հայկական տարազներ, հայրենի գանազան տեսարաններ:

Ապա՝ երեկոյթը Տիրայր ծ. վարդ. Մարգարեան փակել է մի ճառով, որից յետոյ հասարակութիւնը գոհ սրտով հեռացել է Սինէմա-Վիօլէի դահլիճից, ուր տրվել է այդ երեկոյթը:

Հանդիսականների թւում իրանց ներկայութեամբ աչքի են ընկել ինչպէս հայ, այնպէս և հայկաթօլիկ և հայ-բողոքական համայնքների պաշտօնական ներկայացուցիչները: